


ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՁԵՌՆԱՐԿՄԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Նիկոլ Դուման 12Ա,
Երևան 0033, Հայաստան



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՒ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ



Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը հիմնադրվել է 2000 թվականին որպես Հայաստանում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի ձեռնարկությունների բիզնես ասոցիացիա:

Ներկայումս ԱՏՁՄ-ն համարվում է Հայաստանում գործող ամենամեծ բիզնես ասոցիացիան, որի անդամ ընկերությունները Հայաստանում գործող տեղական և միջազգային կազմակերպություններ են, որոնք մասնավորապես ներգրավված են ծրագրային ապահովման ստեղծման, ինտերնետ տեխնոլոգիաների և էլեկտրոնային առևտրի, հետազոտման և զարգացման, կիսահաղորդիչների դիզայնի և այլ մասնագիտացումներում: Մի շարք անդամներ գրավում են առաջատար դիրքեր համաշխարհային շուկայում:



Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) 2011թ.-ից սկսած նախաձեռնել և իրականացնում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման կրթական ծրագիրը: ԱՏՁՄ-ն սկսել է տեխնոլոգիական կրթության հայկական մոդելի արտահանման գործընթացը արտերկիր:

2022թ.-ի տվյալների համաձայն Հայաստանի, (այդ թվում Արցախի), Վրաստանի և Հնդկաստանի տարածքում գործում են 626 «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ, որտեղ շուրջ 17,000 երեխա ստանում է անվճար ինժեներական կրթություն:

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում 10-18 տարեկան երեխաներն ինտերակտիվ արտադասարանական դասընթացների, հետաքրքիր մրցույթների, ինովացիոն ճամբարների միջոցով ծանոթանում են գիտությանը, տեխնոլոգիային, ինժեներությանը և մաթեմատիկային:

ՄՐՑՈՒՅԹԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Առաջին փուլ (Մոդելավորման) - մասնակիցները ներկայացնելու են ըստ կանոնակարգի մոդելավորած ճարտարագիտական առաջադրանքները, որոնք դիտարկվելու են մարզային ստուգող հանձնաժողովների կողմից:

Երկրորդ փուլ (Տպագրություն կամ Փորագրություն) - Մարզային հանձնաժողովների կողմից ընտրված մոդելները պատրաստվում (տպագրվում, փորագրվում) են մասնակիցների կողմից և ներկայացվում եզրափակչում:

Մրցույթի ժամանակ մոդելները փորձարկվում են՝ կանոնակարգում սահմանված խնդիրների համաձայն:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Ճարտարագիտական մոդելավորման մրցույթին մասնակցելու են եզրափակիչ փուլ անցած շուրջ 45 թիմ և ներկայացնելու են

- Շենքերի փոքր մոդելներ (թիմերը մրցակցելու են ըստ շենքերի սեյսմակայունության)
- Կամուրջներ (թիմերը մրցակցելու են ըստ կամուրջների ամրության՝ ծանրոցներ կախելու միջոցով)
- Հողմադացներ (թիմերը մրցակցելու են ըստ հողմադացի առաջացրած հզորության)
- Ռեդուկտորներ՝ ճախարակի միացված (թիմերը մրցակցելու են ըստ առաջացրած ուժի)



ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների բաղադրիչներից են հանդիսանում նաև եռաչափ մոդելավորումը, եռաչափ տպիչով և ԹԿՀ-ով (թվային կառավարման հաստոց) աշխատանքները, որի վերաբերյալ կազմակերպվում է ճարտարագիտական մոդելավորման մրցույթ



ՆՊԱՏԱԿ

- Ցուցադրել աշակերտների եռաչափ մոդելավորման գիտելիքներն ու հմտությունները
- Խթանել արտադրական նախատիպերի պատրաստմանը վաղ դպրոցական տարիքից,
- Ճարտարագիտական աշխատանոցների՝ եռաչափ մոդելավորման, շաղափային եւ լազերային փորագրության դասավանդման արդյունքների ամփոփում,
- Կրթական հաստատությունների եւ ճարտարագիտական ձեռնարկությունների համագործակցության զարգացում,
- Գիտատեխնիկական ստեղծարարության հանրայնացում:

ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Ընդհանուր հովանավորչություն 5 000 000 ՀՀ դրամ

Գլխավոր հովանավոր 2 500 000 ՀՀ դրամ

Հովանավոր 1 500 000 ՀՀ դրամ

Աջակից 1 000 000 ՀՀ դրամ



ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Ձեզմոյսի դրոշմաբանական փաթեթ

PR առաջարկ	Գլխավոր հովանավոր	Հովանավոր	Աջակից
Մասնակցություն մրցույթի մամուլի ասուլիսին (մամուլ ասուլիսի անցկացման դեպքում)	✓		
Մրցույթի մամուլի ասուլիսի տարածքում ռուլափի տեղադրում (մամուլի ասուլիսի անցկացման դեպքում)	✓		
Հովանավորի անվան հիշատակում մամուլի հաղորդագրության մեջ	✓		
Հովանավորի լոգոյի տեղադրում լրագրողներին ուղարկվելիք մամուլի հաղորդագրություններում	✓	✓	✓
Հովանավորի բացման խոսք, հովանավորի վերաբերյալ ինֆորմացիայի նշում (1-2 նախադասություն)	✓		
հաղորդավարի կողմից հովանավորների հիշատակում	✓	✓	✓
Հովանավորին վերաբերող նյութերի տեղադրում մեդիա փաթեթում (press kit)	✓	✓	✓
Հովանավորի բաններների տեղադրում մրցույթի անցկացման ընթացքում	✓	✓	✓
Լոգո բեյջերի վրա	✓	✓	
Մասնակցություն ռադիո նախագծերի - կարող է ներառել հավելյալ բյուջե	✓		
Մասնակցություն հեռուստատեսային նախագծերի - ներառում է հավելյալ բյուջե	✓		

ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Հովանավորչական փաթեթ

Սոցիալական ցանցերի առաջարկ	Գլխավոր Հովանավոր	Հովանավոր	Աջակից
Լոգոյի տեղադրում միջոցառման ֆեյսբուքյան էջի cover-ին	✓	✓	✓
Լոգոյի տեղադրում մրցույթի ֆեյսբուքյան էջի cover-ին	✓	✓	✓
Հովանավորի վերաբերյալ գրառումներ սոցիալական մեդիայում	3 գրառում	2 գրառում	1 գրառում
Հովանավորի վերաբերյալ սթորիներ սոցիալական մեդիայում	3 գրառում	2 գրառում	1 գրառում
Հովանավորի սոցիալական մեդիա էջերի նշում գրառումներում (tag)	✓	✓	✓
Հովանավորի հեշթեգի օգտագործում բոլոր գրառումներում	✓	✓	
Guest Blog մրցույթի հետ առնչվող թեմայով՝ «Արմաթ» կայքով	✓		



UNION OF
ADVANCED
TECHNOLOGY
ENTERPRISES

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

ԱՏԶՄ Կրթական ծրագրերի տնօրեն՝ Շամամ Գևորգյան

Էլ. հասցե

shamam.gevorgyan@uate.org

Հեռ. համար

+37477615552

Վեբ կայք

armath.am

ԱՏԶՄ Կրթական ծրագրերի զարգացման ղեկավար՝ Սոֆյա Հարությունյան

Էլ. հասցե

sofya.harutyunyan@uate.org

Հեռ. համար

+37494833133

Վեբ կայք

armath.am

